նի զկարգմանէ Գեր. Տ. Սուքիաս Արքեպիսկոպոսի նախագահ վանական կառավարութեան Թ. 1485։

—Ցանուն գործակալին Զորլուայ Յակովբ քահանայի, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական՝ ըստ միջնորդութեան Գեր. Տ. փոխ. Թեմական Երևանայ. Թ. 1489։

— Ցանուն Յովհաննէս քահանայի Մոլլարայազիդ գեղջ, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական՝ ըստ միջնորդութեան Գեր. Տ. փոխ. Թեմական Երևանայ. Թ. 1490։

— Ցանուն գործակալին Արդիկու Մովսէս քահանայի, որով շնորհեցաւ նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Գեր. Տ. փոխանորդի Թեմական Երևանայ. Թ. 1491։

— Ցանուն Գեր. Տ. Ներսէս Եպիսկոպոսի փոխ. Թեմական Երևանայ, որով շնորհեցաւ նմա պատիւ Արքութեան Թ. 1462։

— Ցանուն Սինոդի, որով պատուիրի կարգադրել յանձնել աւագ լուսարարի զմոմավաճառութիւն Մայր Տաճարի Ս. Էջմիածնի. Թ. 1463։

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

26 Մարտի 1897 Թ. Երևանի Կոնսիստորիան Թ. 3905 գրութեամբ յայտնում է, որ Քաջարանց գիւղի Աբրահամ քահանան կատարել է Կոնսիստորիայի օրագրութեամբ արգելուած մի պսակ։ Սինոդը վճռեց պսակը վաւերական ճանաչել, իսկ անհնազանդ Աբրահամ քահանային, ըստ զօրութեան պատժական օրինաց 1575 յօդուածի, դատի ենթարկել։

10 դեկտ. Սինոդը Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցու խորհրդի Թ. 40 գրութիւնը ստանալով՝ յանձնարարեց Մայր Աթոռի գանձապահին Երևանի առևտրական բանկից ստանալ վերոյիշեալ խորհրդի ի նպաստ ս. Էջմիածնի ճեմարանի ուղարկած 5000 ռուբլին։

11 դեկտ. Քիշնևի Էջմիածնապատկան կալուածոց կառավարիչ Արժ. Յուսիկ վարդապետը իւր Թ. 9 գրութեամբ յայտնում է, որ տեղւոյն Կոնսիստորիայի ծառայող Կարապետ Յովհաննիսեան Պօղոսեանը՝ Հայր կառավարչի ստորագրութիւնը կեղծելով, Քիշնևի փոխադարձ վարկի ընկերութիւնից ստացել է Էջմիածնապատկան 1400 ռուբլի դրամ։ Սինոդը վճռեց պատուիրել Հայր կառավարչին, որ գործը շարունակէ օրինական կարգով և դրամատնից բաւարարութիւն պահանջէ։

12 դեկտ. Սինոդը վճռեց հրամայել Երևանի Կոնսիստորիային՝ քուրդ Մաղօ Համօ օղլուն, իւր խնդրանաց համաձայն, մկրտութեամբ ընդունել Հայաստանեայց եկեղեցւոյ ծոցը։

13 դեկտ. Սինոդը ստանալով դատարանի զեկուցումը՝ վճռեց հաւատարմութիւնթ տալ Մայր Աթոռի գանձապահին, հանդուցեալ Ս. Ս. Մակար Կաթուղիկոսից մնացած արժեթղթերը ստանալու համար։

22 դեկտ. Սինոդը վճռեց առաջարկել Գէորգեան Հոգևոր ճեմարանի վարչութեանը՝ հրդեհից ապահովել ճեմարանի և ննջարանի շինութիւնները իրենց կահ կարասիքով։

23 դեկտ. Սինոդը Վեհափառ Հայրապետի կոնդակի համաձայն որոշեց հրամայել Վանական կառավարութեանը՝ ներկայացնել Սինոդին հանդուցեալ Երեմիա արքեպիսկոպոսի գոյքի ցուցակը և բանկային տոմսերը։

29 դեկտ. Երևանի Թեմական Փոխանորդի յանուն Վեհափառ Հայրապետի ուղարկած յայտարարութեան համաձայն՝ Սինոդը վճռեց Սարդարապատի գործակալութիւնը բաժանել Վաղարշապատի գործակալութիւնից։

31 դեկտ. Սինոդը Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը լսելով՝ ընդունեց 1898 թուի համար կազմած Մայր Աթոռի ծախուց նախահաշիւը։

31 դեկտ. Տփխիսի Կոնսիստորիան Թ. 4748 յայտարարութեամբ միջնորդում է, որ Տփխիսեցի Վարվառէ Գարասիմեանին թոյլատրուի նորից ամուսնանալ, որովհետև նորա ամուսին Յովհաննէս Աղեքսանդրեան Տէր

Կարապետեանը երկու տարի ու կէս է, ինչ տանից բացակայում է, վճռեց հրամայել Տփխիսի Կոնսիստորիային՝ Յովհաննէս Տէր Կարապետեանի անյայտութեան մասին յայտարարել «Սինոդական հրատարակութեան» մէջ և եթէ մինչև վեց ամիս չմացուի նորա ուր լինելը, այդ դէպքում թոյլ տալ նորա կին Վարվառէ Գարասիմեանին՝ մոռանալ ի նոր ամուսնութիւն։

1898 թ. 9 յունուարի. Սինոդը ստանալով հանգուցեալ Քանանեանի կտակած 1000 ռուբլին, վճռեց առաջադրել Մայր Տաճարի Աւագ լուսարարին ամեն տարի հոգեհանդիսա կատարել տալ հանգուցեալի համար։

9 յունուարի. Սինոդը Ղարաբաղի Կոնսիստորիայի 1248 յայտարարութեան համաձայն վճռեց կրկնապատկել Դոլանլար գիւղի Սարգիս քահանայ Յովհաննէսբէգեանի և Մոմնայ գիւղի Ստեփաննոս քահանայ Վարդապետեանի համար որոշուած պատիժները և ուղարկել ապաշխարութեան Սևանայ վանքը՝ նոցա մինչև այժմ Սինոդի հրամանը անկատար թողնելուն պատճառաւ։

9 յունուարի. Լիտովայի Ռուսաց կոնսիստորիայի խնդրանաց համաձայն Սինոդը վճռեց պօրուչիկ Պետրոս Սողոմոնեան Կուզանեանին ենթարկել եկեղեցական ապաշխարանքի երկու ամիս ժամանակով, ամուսնական պարտականութեան մէջ անհաւատարիմ գտնուելուն պատճառաւ։

12 յունուարի. Վեհափառ Հայրապետի կոնդակի համաձայն Սինոդը վճռեց կազմել բոլոր եպիսկոպոսների և վարդապետների ծառայութեանց ցուցակը և վաւերացնելով մատուցանել Նորին Սրբութեան։

14 յունուարի. Սինոդը ի նկատի առնելով Տփխիսի էջմիածնապատկան կալուածոց աննախանձելի դրութիւնը, վճռեց՝ նախ պաշտօնից արձակել այժմեան կալուածոց կառավարչին. երկրորդ պատուիրել Տփխիսի Կոնսիստորիային մի յանձնաժողով կազմել ձեռնհաս անձերից և յանձնել նոցա, որ կալուածները կարգի բերեն։

19 յունուարի. Վեհափառ Հայրապետի սրբ. կոնդակը լսելով՝ Սինոդը Աշոտ վարդ. Շահնազարեանին ճանաչեց Տպարանական ժողովի նախագահ։

19 յունուարի. Սինոդը, Երևանի Կոնսիստորիայի թ. 709 և 998 յայտարարութեանց համաձայն, վճռեց Քաղսի գիւղի Վրդանէս քահանայ Տէր Յարութիւնեանին դադարեցնել քահանայագործութիւնից իւր անպատուաբեր վարքի պատճառաւ։

19 յունուարի. Սինոդը վճռեց հրամայել Վաղարշապատի գործակալին քրդուհի Ջաւօ Մադօ-կզուն, իւր խնդրի համաձայն, մկրտութեամբ ընդունել Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ ծոցը։

21 յունուարի. Երևանի Կոնսիստորիայի թ. 1,000 յայտարարութեան համաձայն Սինոդը վճռեց Ալմալու գիւղի Խաչատուր քահանայ Տէր Միքայէլեանին դադարեցնել քահանայագործութիւնից իւր գայթակղեցուցիչ վարքի պատճառաւ։

ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ.

Սինոդն ս. Էջմիածնի այսու հաստատեալ ի գիտութիւն մերազգի հասարակութեան, ի միամտութիւն նմին, եթէ լուրն տպագրեալ ի «Իւզանդիոն» լրագրի Կ. Պոլսոյ թ. 350, որ վասն կորստեան ի գանձարանէ Մայր Աթոռոյ 200000 ռուբլի դրամոց, պատկանելոց Մայր Աթոռոյն, է բոլորովին կեղծ և ստայօդ. իսկ դրամքդ այդոքիկ՝ ոչք են տոկոսաբեր արժեթուղթք, ցայսօր ժամանակի կան և մնան յառանձին փակ երկաթեայ արկեղ, ընդ կնքով Սինոդիս, ի բոլորովին ապահով դրութեան։

Անդամ Սինոդի { ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.
ԱՇՈՏ ՎԱՐԴԱՊԵՏ.

Սրբազան Սինոդի 22 յունուար թ. 76 առ Խմբագրութիւնս ուղղուած պաշտօնական գրութեան համաձայն՝ տպագրութեան յանձնելով ներկայ հերքումը, որպիսի հերքումներ ուղղուած են՝ հեռագրով և ընդարձակ գրութեամբ, առ Կ. Պոլսոյ Ամեն. Պատրիարքն, ինչպէս նաև Տփխիսի մի քանի թերթերի,

պարաք ենք համարում մեր կողմից մի քանի բացատրություններ աւելացնել։

Պէտք է ինքնաթ ունենալ, որ յուզումն յառաջ բերող և այսպիսի հերքումներ կարևոր դարձնող լուրը անձանց, ժամանակի և պարագաների այնպիսի անհեթեթ զուգադրությամբ է յերիւրած, որ Ս. Էջմիածնից հազարաւոր վերստեր հեռու գտնուող մի տեղում միայն իրրև ճշմարտանման ինչ լոյս տեսնել կարող էր, և մեր երկրում անշուշտ ոչ ոքի ուշադրություն պէտք է չդրաւէր, եթէ չլինէին կովկասեան թերթեր, որոնք այդ անհեթեթ լուրը վերարտադրելու արժանի համարեցին, պարաք դնելով Մայր Աթոռի պաշտօնական ներկայացուցիչների վերայ՝ հերքել այն։ Իրրև նորագոյն եղելություն ներկայացրած է այստեղ մի գործ, որի մէջ մասնակցում կամ միջամտում են տարբ. առաջ պաշտօնից հրաժարած կամ տասնեակ ամիսներէ ի վեր Ս. Էջմիածնից բացակայող անձինք։ Գողություն է տեղի ունենում այնպիսի մի դրամարկղից, որ Ս. Սինոդի անմիջական հսկողության ներքոյ է և նորա անդամների և Պետ. պաշտօնեաների ներկայությամբ ամսէ ամիս քննության է ենթարկուում. երկար ժամանակ անպատիժ է մնում և վերջը միայն թեթև զրկանք կրում 200000 բուբլի յափշտակողը՝ այնպիսի մի պետության հովանու ներքոյ, որ նման դէպքերում, որ և է պաշտօնական գանձարանի մէջ կատարուած 20 կոպէկի զանցառություն անդամ ամենախիստ պատասխանատուության է ենթարկում։ Կ. Պոլսում հրատարակուող «Բիւզանդիոնի» խմբագրությունը կարող էր Ս. Էջմիածնում գործող անձերի և այնտեղ պատահած դէպքերի մասին տեղեկություն չունենալ, կամ Ռուսաց պետության օրէնքները չիմանալ՝ Տփխիսի թերթերն այդ բոլորը պէտք է իմանային և անտեղի յուզման առիթ չտային։ Ամենից յաւելին այն է, որ յուզում պատճառող լուրը չի կարող բերնէ բերան անցած և աղաւաղուած մի խօսակցության արձագանքը միայն լինել, ինչպէս յաճախ պատահում է, այլ ակն յայտնի կեղծիք է՝ արտադրություն ամենաչարամիտ նենգության, արտայայտություն գաղափարների զարմանալի շփոթությունից յառաջ եկած այն համոզման, թէ հեռաւել «Նպատակը սրբում է միջոցը» սկզբունքին՝ զզուելի է, երբ հռոմի պապի փառքը բարձրացնելու համար է գործ դրուում, և գովելի՝ երբ անմեղ մարդիկ են զրպարտուում, մեծամեծ նպատակների հասնելու համար։

Ինչ վերաբերում է Ս. Էջմիածնի դրամական հաշիւներին՝ մենք չենք կարող հասկանալ, թէ ինչու նորա կանոնաւորության մասին կասկածներ պէտք է լինին, կամ ինչ պատճառով պէտք է տարածուի այն կարծիքը, թէ Ս. Էջմիածնում ահագին գումարներ են գիզուում և առանց հաշուի ու անկանոն կերպով գործ դրուում։ Մի՞թէ յայտնի չէ ամենքին, որ Մայր Աթոռի բոլոր եկամուտները՝ մշտական և պատահական միասին առած, երբէք 100—110 հազարից չեն անցել և որ այդ բոլոր գումարը կոպէկ կոպէկ արձանագրուում է ժապաւենեալ մատեանների մէջ, որոշ նախահաշուի համաձայն բաշխում հաստատությունների վերայ՝ որոնք կրկին Ս. Սինոդից յանձնուած ժապաւենեալ մատեանների մէջ արձանագրում են իրենց ծախքերը և ներկայացնում Ս. Սինոդին ի քննություն։ Ցայտնի՞ չէ միթէ, որ Ս. Էջմիածնի այդ անագին եկամուտներով վեհարան, միաբանություն, ճեմարան, տպարան, ազգարակ է պահպանում՝ ուխտաւորներ, հիւրեր և դպրոցականների անսպառ գնդեր են կերակրում, և այդ կատարում է շնորհիւ այն հանգամանքի միայն, որ բոլոր վերոյիշեալ հաստատությունների մէջ խիստ հաշիւ է պահում և խիստ տնտեսություն, որ Ս. Էջմիածնի միաբանությունը իւր վեհապետով մեկտեղ ամենահամեստ կեանքն է վարում, անվարձ աշխատություն բաժանելով իւր բոլոր անդամների վերայ անխտիր։

Արարատի խմբագրությունը շնորհակալություն ստացել է Մեծ. Պարոն Ա. Ծատուրեանից մի հարիւր ռուբլի 25 օրինակի բաժանորդագրի, որոնցից հինգ օրինակը կուղարկուի այլ և այլ տեղեր՝ յարգելի նուիրատուի որոշմամբ, իսկ 20 օր. թողնուած է խմբագրության անօրէնության։ Խմբագրությունս որոշից տասն օրինակը ուղարկել այլ և այլ հաստատության, իսկ 10 օրինակը Կ. Պոլսոյ Ամեն. Պատրիարքին, ըստ իւր բարեհայեցողության բաժանելու համար Ցանկահայոց թեմ. կենտրոններին։